



## ՀԵՐՄԵՍԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԴՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ\*

§ 7

Հերմեսի հայերեն ներկա տեքստը կարևոր է հայագիտական վիճելի մի ուշագրավ հարցի կապակցությամբ:

Հինգերորդ դարի հայ ականավոր պատմիչ Եղիշեն իր «Վասն Վարդանանց և Հայոց պատերազմին» աշխատության երկրորդ «Եղանակ»-ում, ինչպես հայտնի է, խոսելով ե դարի հայ ժողովրդա-պատմագրական հերոսական պայքարի մասին և ցանկանալով այդ օրինակի վրա անվեճերություն պատվամել գալիք սերություներին, մեջ է բերում Հնագույն փիլիսոփաներից մեկի իմաստաւոց խոսքը. «Մա՞ս ու իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն»<sup>12</sup>: Հստ որում, Եղիշեն այստեղ անունով չի հիշում բերված դարձվածքի հեղինակը, այլ անորոշ ձևով ակնարկում է՝ «որպէս ասաց ո՞ն ի հնոց»<sup>13</sup>:

Ո՞վ է եղել Եղիշեի ակնարկած այդ «ոռն ի հնոց»-ը, ումի՞ց է վերցրել նա իրոք այդ իմաստուն խրատը: Պատմական գիտությունների թեկնածու լ. Խաչիկյանը իր «Եղիշեի Արարածոց մեկնությունը» խորագործ դիմումագիոն աշխատության մեջ այն կարծիքն է Հայտնել, որ Եղիշեն այդ դարձվածքը վերցրել է Հերմեսի «Սահմանք»-ից:

Հերմեսի հայկական տեքստում վերև բերված դարձվածքը հանդիպում է մեղ հետևյալ

ձևակերպությամբ. «Մա՞ս իմացեալ անմահութիւն է, ոչ իմացեալ մահ»:

Լ. Խաչիկյանի այս տեսակետը անվերապահ ընդունելու գեպօւմ մենք կամ Հունարան դպրոցի թարգմանության վակ շըրջանը պիտի վեցերորդ դարից իցեցնենք Հինգերորդ դարի կեսը և կամ մեջ Եղիշեի ժամանակը շարժենք դեպի վեցերորդ դարի սկիզբը: Երկու դեպօւմ ել Հերմեսի «Սահմանք»-ը անգնահատելի աղբյուրագիտական դեր կարող է կատարել մեզ համար՝ ժամանակագրական հենակներ ստեղծելու գործում: Բայց, դժբախտաբար, մատնացուց արված նմանությունն այնքան փոփր է և ընդհանուր, որ գելիքը է լուրջ հեղակացություններ հնակել այդ հիման վրա: Ակադեմիանայի մեջ է հայտնել որ «Մեջ բերված համապատասխան վկայությունների համեմատությունից տեսնում ենք, որ Եղիշեի հատվածն ավելի ընդարձակ է, քան Հերմեսինը: Ուստի և գելիքը է, իմ կարծիքով, անվերապահ կերպով պնդել, որ Եղիշեի Պատմությանը աղբյուր է ծառայել Հերմեսի «Սահմանք»-ը: Հայտնի է, որ Նոր-Պղատոնական դպրոցի երկրորդ իրենց մեջ համախ պարունակում էին նման մտքեր և նման հատվածներ. ուստի և միանգամայն հնարավոր է, որ վերոհիշյալ հատվածը կարող էր Եղիշեն քաղած լինել որևէ այլ աղբյուրից»<sup>14</sup>:

Հանգուցյալ ակադեմիկոսի այդ տարակութանքն ավելի քան հավանական է երեսում, եթե նկատի ունենանք, որ Եղիշեի մոտ վերև հիշված հատվածի հետ միասին

\* Շարունակված ամսագրի 1957 թվականի մայիս-ից:

<sup>12</sup> Եղիշե, «Վասն Վարդանանց և Հայոց պատմագմին», Տփղիս, 1904 թ., էջ 23:

<sup>13</sup> Նույն տեղում:

<sup>14</sup> «Բանբեր Մատենադարանի», № 3, էջ 293:

բերված են մի շարք այլ իմաստասիրական մտքեր ևս, որոնցից ոչ մեկը մենք չենք գոտնում՝ Հերմեսի հայկական տեքստում:

### § 8

Հերմեսի «Սահմանք»-ի հայկական բնագրի կապակցությամբ անհրաժեշտ է պարզել կարեռը մի հարց ևս— Հերմեսի բնագիրը արդյոք հարազատ ձևով է մեկ հասել, թե միջին դարերում ենթարկվել է աղճատման՝ ընդորինակող գրիշների կողմից:

Մեր կարծիքով, Հերմեսի տեքստը, հիմնականում, մեզ հասել է աննշան փոփոխություններով: Առանձնապես ընտիր տեքստը է հանդիսանում Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 419 ձեռագիր ընդորինակողյունը. Նա խոր հնության կնիքը ունի իր վրա: Սակայն այս տեքստում ևս նկատվում են որոշ ընդմիջարկություններ (ինտերպուլացիաներ): Հերմեսի հայկական տեքստում՝ ընդմիջարկություններ ենք համարում հետեւյալ պարբերությունները.

Երկրորդ էջում բնագրում ասվում է. «Աշխարհ իմանալի է աստուած, միտք ճշմարտութեամբ, անեղն»: Ընդմիջարկողը բնագրի այս պարբերությունը մեկնել է ավելացնելով. «Իմանալին էապէս անեղն և աննառելին իմանալի բարի, միանգամայն ասել՝ աստուած իմանալի աշխարհ, անշարժ, միակ, անտեսանելի աշխարհ, իմանալի բարի, անտեսանելի և անենա»:

Երկրորդ էջում բնագրում ասվում է. «Հրոյ գոյացութիւն է այրեցող»: Հայ հեղինակն այդ պարբերությունը մեկնել է. «քայց այլ է հուր, և այլ է լոյս, բանցի ընդ որ հարցի, հուր ապականի, իսկ լոյս այնպիսի է երեւյը, որպէս ինքն ասէ»: Հայ մեկնչի ակնարկը՝ «ոռապէս ինքն ասէ», նկատի ունի տեքստի հեղինակին՝ Հերմեսին:

Երրորդ էջում բնագրում ասվում է. «... Մով շատ է և երկիր, բայց երկին ժու և զոյգ ծովու և երկրի»: Այս պարբերությունը հայ հեղինակը մեկնել է. «Եւ կամէր ասել (այսինքն Հերմես կամեցել է ասել— Ս. Ա.) թէ երկին զոյգ է երկրի և ծովու ըստ մեծորեան, որքան երկորին են, զի ամենայն ինչ ի ներքս առեալ փակեաց և ի ներքս արգելեալ ունի»:

Չորրորդ էջում, ուր Հերմեսը խօսել է փիտության և անփիտության, շար ու բարի լինելու մասին, հայ մեկնիչն իր կողմից ավելացրել է. «Ասէ զշարն յանգիտութինն, և գրարին՝ ի գիտութենէ»:

Վեցերորդ էջում, ուր Հեղինակը խօսում է բանական մարդու անձնիշխան լինելու մասին, հայ մեկնիչն իր կողմից ավելացրել է.

«Երե կամեցես, զի կարելի է, բանցի կամեաց և իման և հաւատաւ և սիրեան և եղեր»:

Հերմեսի հայկական տեքստի վերջին մասն ամբողջապես, ուր խօսվում է շորս տարրերի ու նրանց հատկությունների մասին, հեղինակինը չէ, այլ վերցված է Արիստոտելից և Պլատոնից: Այս հատվածում, որպես հեղինակներ մատնացուց են արված Արիստոտելը և Պլատոնը: Որ այդ հատվածը, իրաքանչեղակնը չէ, այլ վերցված է այլ հեղինակներից, կարելի է համոզվել այն փաստից, որ Հերմեսն առջևում արդեն խոսել է շորս տարրերի ու նրանց հատկությունների մասին և այսպես հարկ չըր ունենա նորից կրկնել: Մեր համեմատական ուսումնասիրությունից պարզվեց, որ նշված հատվածի հիմնական աղբյուրն է Արիստոտելի «Յաղագա աշխարհի» աշխատության հայերեն թարգմանությունը:

### § 9

Վերջապես, անհրաժեշտ է պարզել աղբյուրագիտական մի հարց ևս— ե՞րբ է կատարվիլ Հերմեսի «Սահմանք»-ի հայերեն թարգմանությունը:

Ակադ. Հ. Մանանդյանը, որը երկար տարիներ զբաղվել է հունաբան մատենագրության ուսումնասիրությամբ և աշխատել է նրանք խմբավորել, պարզել նրանց լուրացնությունը թարգմանության ժամանակը, Հերմեսի «Սահմանք»-ը դասում է Փիտոյից—Փիլոյյան խմբի մեջ և թարգմանության ժամանակն է սահմանում վեցերորդ դարի կեսերը. «Հեղինական բոլոր վերսիշշալ գիտողություններն ի մի ամփոփելով,— գրում է նա, — կարծում եմ, որ կարող ենք վստահորեն ենթադրել, որ Հերմեսայ նումնիծի առ Ասկղեպիոս Սահմանք»-ը թարգմանված պիտի լինի հունարենից, Փիտոյից—Փիլոյյան խմբի երկրից հետո, հավանաբար, է դարի երկրորդ կիսում կամ ամենավաղը Զ դարի կեսերին<sup>15</sup>:

Ակադ. Հ. Մանանդյանն իր այս ենսակետն աշխատել է հիմնավորել լիզվագիտական և աղբյուրագիտական տվյալների վրա: Անհրաժեշտ ենք համարում համառոտակի բերել հիմնական կովանները.

Ա) Հերմեսի «Սահմանք»-ում գործ են ածված Փիտոյից—Փիլոյյան խմբի տեքստերում օդապարծված հետեւյալ բանն բառերը. անբեղուն, անորակ, բաղդատուրին, բաղկացուրին, գերաշխարհիկ, գոյացուրին, եղանել, երբակայ, էակ, ընդունական, ձայնաւր, միակ, ներգործուրին, շաղկապ, որակ, պա-

<sup>15</sup> Հ. Մանանդյան, «Հերմես նումնիծի առ Ասկղեպիոս Սահմանք» (տե՛ս «Բանքեր Մատենագրականի» № 3, էջ 291—293):

բունակեմ, սերուն, տեսակ, փոխարկեմ, բանակ:

թ) Հերմեսի հայերեն թարգմանության մեջ դորձ է ածված հայ լեզվի համար անսովոր սէ թվական դերանունը, որը հանդիպում է նաև Պիտոյից—Փիլոնյան խմբի տեքստերում:

Դ) Պիտոյից—Փիլոնյան խմբի թարգմանության հունական ձո՞ն նախդիրը տրվում է հայկական գրականության մեջ անսովոր ն տառվ՝ նիմոյ, փոխանակ իմոյ, նոգոյ փոխանակ ոգոյ և այլն, նման նախդիրի գործածություն մենք հանդիպում ենք նաև Հերմեսի հայկական տեքստում՝ նիմերէ փոխանակ իմերէ:

Ե) Հերմեսի տեքստում մի թվական անունը տրված է մու ձեռվ, որը հատուկ է Պիտոյից—Փիլոնյան խմբի տեքստերին:

Յ) Հերմեսի «Սահմանք»-ում գործ է ածվել «ներհակ» բառը, որը մեզ հանդիպում է միայն Պիտոյից—Փիլոնյան խմբի տեքստերում:

Ճիշտ համարելով հանդերձ ակադ. Հ. Մանանդյանի մատնացույց արած փաստերը և այդ փաստերից հանած եղրակացությունները՝ Հերմեսի հայկական թարգմանությունը Պիտոյից—Փիլոնյան խմբին պատկանելու հարցում, համոզեցուցիլ չենք գտնում նրա

այն պնդումը, որ Պիտոյից—Փիլոնյան խմբի ժամանակը պիտի համարել զ դարի կեսը: Այդ խմբի թարգմանությունների ժամանակը, ինչպես ցուց է տվել բանասեր Գ. Տեր-Մկրտչյանը<sup>16</sup>, իսկ հատագայում նաև պրոֆ. Մ. Արեգյանը<sup>17</sup>, պիտի համարել Ե դարի իննունական թվականները: Մեր կարծիքով, անվիճելի պիտի համարել Տեր-Մկրտչյանի տոմարական այն հաշվումները, ըստ որի Պիտոյից—Փիլոնյան խմբի աչքի ընկնող հեղինակներից մեկի՝ Տիմոթեոս Կուզի «Հականառության»-ը, անվիճելի, կատարված է 480—484 թվականների ժամանակաշրջանում:

Այստեղ մենք հրատարակում ենք Հերմեսի «Սահմանք»-ի հին հայերեն թարգմանությունը, վերցնելով Հայկական ՍՍՌ Պիտոյան մատենադարանի № 419 ձեռագրից՝ փոքրիկ ուղղամբ կատարելով մյուս ձեռագրերի տեքստերի հիման վրա:

16 Գ. Տեր-Մկրտչյանի հոգվածը տե՛ս «Արարատ», 1908 թ., էջ 564—589:

17 Մ. Արեգյան, «Հայոց հին գրականության պատմություն», 1 հատոր, Երևան, 1944 թ., էջ 613—618:

18 Գ. Տեր-Մկրտչյան, «Հայ մատենագրության հնագույն թվականները» (տե՛ս «Եղակաթ», Վաղարշապատ, 1913 թ., էջ 163):

## ԵՐՄԵԱՅ ԵՌԱՄԵԾԻ ԱՌ ԱՍԿՂԵՄԻՈՍ, ՍԱՀՄԱՆՔ

Աստուած՝ իմանալի աշխարհ. աշխարհ՝ զգալի աստուած. մարդ՝ բակ-տելի աշխարհ:

Աստուած՝ անշարժելի աշխարհ. երկիր՝ շարժուն աշխարհ. մարդ՝ բանաւոր աշխարհ:

Ապա երեւ ուրեմն աշխարհ. արդ՝ անշարժելի աշխարհ՝ աստուած, <շարժուն աշխարհ՝ երկիր>. իսկ բանաւոր աշխարհ՝ մարդ, զերկու միակին՝ աստուած և ըստ տեսակին՝ մարդ:

Երեւ ուրեմն աշխարհ ամենայնք. երկու միակին, եւ մի՝ իմանալին, եւ մի՝ ըստ տեսակին, իսկ երրորդ՝ ըստ լրութեանն ամենայն բազմութենք երից աշխարհաց՝ երկու տեսանելիք՝ զգալին եւ բակտելին աշխարհ մարդ, իսկ իմանալին՝ է աստուած, ոչ է տեսանելի, այլ երեւելի է, ի տեսանելիս:

Որպէս անձն ի մարմնի տեսակ ունելով, զոր առանց անձինն անկար է բաղկանալ, այսպէս և ամենայն տեսանելիք առանց անտեսանելոյն բաղկանալի || ո՛չ կարէ:

Արդ, է փոքրիկ աշխարհ մարդ, ըստ անձին եւ շնչոյ, եւ աշխարհ կատարեալ, որոյ մեծութիւն ո՛չ առանելու զգալին աստուած աշխարհ:

Աշխարհ իմանալի է աստուած, միտք նշմարտութեամբք, անեղն: Իմանալին է ապահով անեղն եւ աննառելին իմանալի բարի, միանգամայն ասել՝ աստուած իմանալի աշխարհ, անշարժ, միակ, անտեսանելի աշխարհ, իմանալի բարի, անտեսանելի եւ աննառ:

Աստուած է մշտեցենաւոր եւ անեղ, մարդ է մահկանացու, կենդանի միշտ լինելով:

Միշտ է անտեսանելի բարի:

Անձն է ամենայն մարմնոյ յարգարուն, հարկաւոր շարժուն:

Մարմին է ի բանից որակութեանց մու գեղեցկախառն բաղկացութիւն,

ի շերմոյ, ի ցրտոյ, ի ցամաքէ, եւ ի խոնաւոյ. ի շերմոյ, ի հրոյ, ի ցրտոյ,  
ի ցամաքէ, ի հողոյ, ի խոնաւոյ, ի ջրոյ:

Շունչ է անձին մարմին կամ անձին սիւն:

Երկին է մարմին մշտնչենաւոր, մարմին անյեղափոխ յանձնէ և ի մտաց  
խառնեալ:

Ալդ է երկին մեկուսութիւն եւ երկրի կամ երկնի շաղկապ:

Զի՞նչ է ալդ. զմիչոց երկին եւ երկրի ալդ ասեն. բառ որում, ո՞չ են մեկ-  
նեալ ի միմիանց, բանզի միաւորեալ են երկին եւ երկիր աւղով:

Երկիր է նեցուկ աշխարհի, եերակայ տառիցն, կենդանեաց դայեակ,  
մեռելոց ընդունիչ հրոյ, իրբեւ վերին զաւ եղեալ:

Յես հրոյ եւ ջրոյ զի՞նչ կարէ աշխարհ զամանան այսպիսիս, որպիսիքն  
եղեն, միշտ պահել եւ զմանկանացուն միշտ փոփոխել:

Չուր է սերուն գոյացուրիւն, երկրի նեցուկ, իրբեւ թէ սենդական գոյա-  
ցուրիւն:

Չուր է գոյացուրիւն անսերուն, անման, անմարմնոցն տեսդուրիւն եւ  
մանկանացուացն ապականիշ, գոյացուրիւն անբեղուն, իրբ թէ ապականող  
ի հրոյ եւ աներեւոյր արարողի եւ անմանիցն:

Ըստ որում, անմանն անապական է՝ որ ի հրոյ ոչ ծախի, իսկ մանկա-  
նացուն ապականի ի հրոյ:

Լոյս է բարի եւ առատ տեսումն, տեսանելեացն ամենեցուն երեւոյր:

Հրոյ գոյացուրիւն է այրեցող. բայց ա'լլ է նուր, և ա'լլ է լոյս, բանզի  
ընդ որ հարցի, հուր ապականի, իսկ լոյս այնախիս է երեւոյր, որպէս ինքն  
ասէ:

Չուր ինչ անձն շարժէ, միտքն իմանայ, ներզործուրիւն իմն ելով շունչ  
ներգործէ:

Ո'չ ինչ անքնակ է աստուծոյ, բանզի ուր երկին՝ է եւ աստուծ, իսկ ուր  
աշխարհ՝ է եւ երկին:

Ճաստուծ յերկին կարծեմք եւ զերկին յաշխարհի:

Թագում անքնակ է մարդկան, զի ուր աշխարհ է՝ եւ երկիր, այլ ո'չ յա-  
մենայն երկրի է ի մարդ:

Ծով շատ է եւ երկիր, լ բայց երկին մու եւ զոյգ ծովու եւ երկրի:

Եւ կամէց ասել՝ թէ երկին զոյգ է երկրի եւ ծովու բառ մեծուրեան, որ-  
քան երկոքին են, զի ամենայն ինչ ի ներքս առեալ փակեաց եւ ի ներքս  
արգելեալ ունի:

Երկին բան զամենեսին մեծագոյն է, եւ արեգակն՝ բան զերկիր եւ զծով.  
զի բառ երկոսին է տարածեալ: Բայց երկիր մեծագոյն է ծովու, զի նմա  
է ծով եւ յերկեն՝ ամենայնքն, բանզի զվերինսն ունի, իսկ զատորինսս ի ներքս  
շուրջ արգելեալ ունի:

Աստուծ ճախիկին բարի ամենայն իմանալեաց, աստուծ իմանալեացն  
հայր, երկին մարմնյ արարիշ:

Մեծուրիւն արեգական լուսոյ՝ է երկիր եւ ծով, մեծուրիւն երկնի՝ է աշ-  
խարհի մեծուրիւն, աշխարհի՝ է աստուծ:

Որք յերկին են կենդանիք, ի հրոյ եւ ի յաւոյ բաղկացեալ են, իսկ որք  
յերկրի՝ ի շորից տառից:

Բանաւոր կենդանի՝ մարդ, զի միտոս ունի, բայց այլ ամենայն կենդա-  
նիք, որք ձայնաւորք են, զի շունչ ունին եւ անձն:

Զի ամենայն, որ նուազէ եւ անէ, կենդանի է, եւ ի կենդանեացն են՝ որ  
անմանի եւ շնչարք են:

Եւ են, որք միտոս եւ անձն եւ շունչ ունին, եւ են, որ միայն շունչ, եւ  
են, որ անձն եւ շունչ, եւ են, որ միայն կեանս:

Զի կեանք առանց շնչոյ եւ մտաց եւ անձնին եւ անմանուրեան կարէ բաղ-  
կանալ, բայց այլքն ամենեքեան առանց կեանց անկար է գոլ:

Բան մտաց արքանեակ է, զի զոր կամին միտքն, զայս եւ բան բարգմանէ:

Միտք զամենայն ինչ տեսանէ, իսկ աշք՝ զամենայն մարմնական: Եւ  
սակայն միտք աշաց ո'չ լինի դէտ, այլ աշք՝ մտաց:

Մտաց ո՞չ ինչ անհաս է, բանի ո՞չ անհառելի, լուր կարով իմանայ, խաւ-  
սելով խաւսի, բանզի ի լոռորեան միտք յանայ գրան:

Որ ի լոռորենէ եւ ի մտաց՝ բան մու փրկուրին, որ ի բանէ՝ բան մու կո-  
րուստ, զի վասն մարմենյի մարդն մահկանացու, բայց վասն բանի՝ անմահ:

Որ գրան ո՞չ իմանայ, միտո ո՞չ ունի: Որ խաւսի առանց մտաց, ո՞չ ինչ  
ասէ. ո՞չ ինչ իմանարով միտո ո՞չ ունի եւ խաւսի, զի խաւսին ամբոխ է եւ  
ամբոխն ո՞չ միտո եւ ո՞չ բան ունի:

Բան մտաւոր աստուծոյ պարզեն է, բան անմիտ՝ մարդոյ զիւռ է:

Ո՞չ ո՛վ գերկին տեսանէ եւ որ ի նմա, բայց միայն՝ մարդ: Միտո եւ բան  
միայն ունի մարդ:

Որպիս աստուծք՝ ստացուած աստուծոյ, մարդ՝ ստացուած մարդոյ:

Յաշխարին երէ տեսողն ո՞չ էր, ո՞չ էր ապաժիկն եւ որ տեսանիւրն. մարդ  
միայն իմանայ զիմանալիսն եւ տեսանէ զտեսանելիսն, որք ոչ են ատար ի  
նմանեն:

101ա Մարդ գերկոսին բնորիխն || ունի՝ զմանկանացու եւ զանմանեն:

Մարդ գերեսին գոյացուրիխն ունի՝ զիմանալիսն, զշնչականն եւ զնիրա-  
կանն:

Որպէս յորովայնէ ելեր, այսպէս եւ ի մարմենյ ելցես: Որպէս յորովայն  
ո՞չ եւս մտցես, այսպէս եւ ի նիրականս յայս մարմին այլ ո՞չ եւս մտցես:

Որպէս յորովայնի ո՞չ զիտէիր զաշխարիխս, այսպէս եւ արտաքոյ մարմ-  
ենյ եղեալ ո՞չ ծանիցես զարտաքին մարմենյ էակս:

Որպէս ելանելով յորովայնէ զորովայնիսն ո՞չ ինչ յիշես, այսպէս եւ ի  
մարմենյ ելանելով ո՞չ ինչ յիշեսցես:

Որ ի մէջ կայիս եռգ տաճի, երբայ զիես մէջ կայիս եւ հանդերձեալին:

Որպէս յորովայնէ մանուկն կատարեալ ի դուրս զայ, այսպէս եւ անձն  
կատարեալ ի մարմենը անտի ի դուրս զայ, բանզի որպէս անկատար մար-  
մին յորովայնէ եղեալ անսուն եւ անան է, այսպէս եւ անձն ի մարմենյ եղեալ  
անկատար անմարմին է, զի կատարելուրին անձին՝ զիտուրին էակացն:

Որպէս անձին ի մարմենի արացես, այսպէս եւ զա եղեալ ի մարմենյ  
արացէ քեզ: Կալ զիեզ, ո՞վ եռամեծ:

Խոկ արդ, զի՞նչ է մարդ, զի երէ ոչ մարմին, ո՞չ անձն, յէ՛ Ասկդէպիէ սի-  
րելի. որ ո՞չ անձն է, ո՞չ միտք, ո՞չ մարմին:

Զի է՛ ինչ, որ լինի մարմին մարդոյն եւ են ինչ, որ զան առ մարդն:

Արդ, զի՞նչ պարտ է նմա կոչել մարդ ապաժիկն, ո՞վ Ասկդէպիէ. եւ մարդն  
զի՞նչ է, անմահ տեսակ ամենայն մարդոյն եւ ամենայն կենդանուոյ:

Եւ մարդոյն տեսակ յերկնի, եւ յատ, յերկրի, եւ ի չուր:

Երբեւ երաշ իմն յորովայնի մարմինն ստեղծանի, այսպէս եւ ի մարմենի  
անձն:

Ի բույ ի լոյս ելանէ մարմինն յորովայնէ եւ անձն ի խաւսար ի լուսոյ  
մտանէ ի մարմինն:

Մարմենյ տեսողք աշք եւ անձին՝ միտք, որպէս մարմին աշս ո՞չ ունելով  
ո՞չ տեսանէ, այսպէս եւ անձն միտո ո՞չ ունելով կոյր է:

Որպէս պակալիսցէ ցանկուրեամբ որ յորովայնին է, այսպէս եւ մայրն  
ցանկայ, այսպէս եւ որ ինչ յանձինն պակալիսցի ցանկուրեամբ, զայս եւ  
մարդն ցանկայ:

Անձն առ հարկի մտանէ ի մարմին, բայց միտք ըստ բնորիխան մտանէ  
յանձն:

Անձն արտաքոյ երով մարմենյ՝ անորակ եւ անքանակ է, ի մարմին եղեալ՝  
զորակն եւ զբանակն անբեղունելի, եւ զբարին եւ զշարն, զի նիրճ սոցա  
արաշական է:

Աստուծն յինքեան է, աղխարի յաստուածուն է, մարդն յաշխարմի: Սո-  
րա պակասուրիհնեն՝ տպիտուրին է, սորա լրութին՝ զիտուրին աստուծոյ:

Ասէ զշարն՝ յանզիտուրենէ եւ զբարին՝ ի զիտուրենէ:

Առաւել բան զորուիք կարողուրին ամենեցուն, անկարելի է:

Բնորիխն է իրամանչիւր ինչ սոցա էիցս, լլ աւէն ի վերայ նակատագրին  
յերկնի:

Եւ նակատագիր է, որ ըստ արժանառութեան է եղիալ, աւրէն է, որ ըստ մարդկան հարկաւորութեան, աստուած է, որ ըստ կարծեաց մարդկան է եղեալ:

Աստուածային մարմինն անց զեացից զգայուրեանց ո՞չ ունին, զի յինքնան իսկ ունին զգայուրինս, և ենյն իսկ ինքնան զգայուրինք են:

Չոր աստուած առնէ՝ մարդ ո՞չ առնէ, եւ զոր ինչ աստուած առնէ՝ մարդոյ առնէ, բայց զոր մարդ առնէ՝ անձին առնէ:

Որք զկուս պատկեր պաշտեն, զի երէ զիտուրեամբ պաշտէին, ո՞չ մոլորեալք են ի բարեպաշտուրենէ:

Մարդ սպանանել կարէ, աստուած՝ կեանս տալ:

Մարմին անէ եւ նուազէ ի բնուրենէն, իսկ անձն լնու ի մտաց:

Ամենայն մարդ մարմին եւ անձն ունի, այլ ո՞չ ամենայն անձն միտս: Երկու միտք են. է՛ որ արժանառու եւ է՛ որ անձնական, բայց են ունին, որ եւ զանձնականն ոչ ունին:

Որ զմարմինն իմանայ՝ եւ զանձն իմանայ, որ զանձն իմանայ՝ եւ զմիտս, բանզի սբանչելին բնական տեսուրեանն է. երկաբանչիրքն ի ձեռն երկաբանչիւրոյ տեսանին:

Բնուրին հայելի է նշտուրեան. սէ եւ անմարմեցն է մարմին եւ աներեւուրիցն լոյս վարդապետէ ամենեցուն առաս բնուրեամբ:

Երէ ոչ ինչ մեզ վարկպարազի զործ բունցի գոլ, գոցես զգործն եւ զարողն. երէ խաղ մեզ բունցի, խաղ լիցիս:

Դու ունիս իշխանուրին ազատել, զի ամենայն ինչ մեզ տուաւ, ո՞չ ո՛չ չափական է մեզ:

Ամենայն ինչ մեզ եղեւ, զի ի ձեռն միոյ կամ ամենայնի իմասցիս զարողն, բանզի զոյ իշխանուրին մեզ կամել ո՞չ իմանալ, զոյ իշխանուրին մեզ բուզ բերահաւատել եւ վրիպել եւ ներհական էակացս իմանալ:

Այնքան ունի մարդ իշխանուրին, որքան եւ աստուածք. միայն մարդ ազատ կենդանի, միայն սա բարոյն եւ շարին ունի իշխանուրին:

Ո՞չ զոյ մեզ իշխանուրին անման լինել, բանզի ո՞չ եւ անմանին մեռանիլ մեզ, եւ աստուած բոյ լինել. երէ կամիցես, զի կարելի է, բանզի կամեաց եւ իմա՛ եւ հաւատու՛ եւ սիրեա՛ եւ եղեր:

Ամենայն մարդ զաստուած կարծէ, բանզի երէ մարդ է զաստուած զիտէ:

Ամենայն մարդ զեոյն աստուած կարծելով, մարդ է եւ աստուած, եւ ամենայն՝ յաստուծոյ եւ վասն մարզոյն:

Աստուած է ամենայն ինչ եւ ո՞չ մի ինչ ո՞չ առանց աստուծոյ, բանզի աստուած ո՞չ ինչ է եւ ոչ մին:

Վասն աստուծոյ՝ մարդ, վասն մարդոյ՝ ամենայն ինչ:

Աստուած մարդոյ իշխու եւ մարդ՝ ամենայնի:

Յարտամանյն՝ արտամոյն իմանին: Ակն զարտամոյն տեսանէ, իսկ միտք՝ զի ենրէս:

102ա Ուրանաւ միտք՝ անդանաւ || լոյս, եւ ուրանաւ լայս՝ անդանաւ եւ միտք, բանզի միտք՝ լոյս եւ լայս՝ միտք. որ միտս ունի՝ լրասաւենալ է:

Որ զաստուած զիտէ՝ յաստուծոյ երկնչի, որ զաստուած ո՞չ զիտէ՝ յաստուծոյ ո՞չ երկնչի:

Որ ո՞չ ինչ զիտէ էակացս՝ յամենայն իմերէ երկնչի, իսկ որ զամենայն ինչ զիտէ էակացս՝ ոչ յիմերէ երկնչի:

Հիանդարին անձն՝ տրտմուրին եւ խնդուրին: Կիրք՝ անձին ցանկուրին, եւ կարծիք՝ նման է անձան:

Եւ մարմինք ի տեսանել ո՞չ ո՛չ բարի, զազիր, ո՞չ ո՛չ լաւ, չար՝ ամենայն ինչ տեսանելի է՛ որ միտս ունի:

Որ բնդ միտ ածէ զինքն, զիտէ զինքն, եւ որ զիտէ զինքն, զամենայն ինչ զիտէ:

Ամենայն ինչ ի մարդողէ, որ մարմեոյ դիւր առնէ, իւր զժուար առնէ:

Մարմին առանց անձին մեռեալ է եւ առանց մտաց՝ մոլար: Անձն ի մարմնի մտեալ՝ զմիտս ստասցի:

Որ միտս ո՞չ ստահայ, այնպիսի եղանէ, որպէս եմուտն. բանզի անձն ամենայն նախ բան ի մարմին մտանել անմիտ է, եւ յարին ի սա միտք ի մարմնոյն եւ այնպէս ապա լինի անձն մտաւոր:

Որ ի մարդկային մարմնոյն ել ի դուրս, յիշատակախտ, բանզի անձն ի մարմնոյ ծածկեցեալ բռնադատի՛ սա յիշել զիւր անմոռացորին փոփոխումն է անմոռաց եւ փոփոխումն մոռացորին գործէ:

Որ մարդ է՝ եւ աստուած:

Ո՞չ ումեմ երեկի աստուած, բայց միայն մարդոյ:

Կասէ մարդոյ՝ աստուած ի մարդ շրշեալ կերպարանայ:

Աստուած՝ մարդասէր, մարդ՝ աստուածասէր. մի ազգակցորին ասուն ծոյ եւ մարդոյ:

Միայնոյ մարդոյ աստուած լսէ եւ մարդ՝ աստուածոյ:

Երկրպագելի՝ աստուած, զարմանալի՝ մարդ: Աստուած ո՞չ երեկի առանց մարդոյ:

Ցանկալի է աստուածոյ մարդ եւ աստուած՝ մարդոյ, բանզի ցանկորին ո՞չ իմերէ, բայց ի մարդն եւ յաստուած:

Ջերկիր գործեն մարդիկ, գերկին զարդարեն աստեղի:

Ջերկին աստուածք ունին, զերկիր եւ զծով՝ մարդիկ, բայց արդ հասարակ է աստուածոց եւ մարդկան:

Ջի՞նչ է լաւ՝ որ բաղդատորին ոչ ունի. լաւն աներեւոյր է, շարն աներեւորացոյն է:

Ջի՞նչ է էգ. լուծումն ընդունական:

Ջի՞նչ է արու. լուծումն սերմենական:

Բնութին է ամենակերպն ի մարդում եւ ամէն որակ ներգործորին եւ ամէն որակ՝ կար:

Որոյ ներգործորինն աներեւոյր եւ գործեն երեմելագոյն, ներգործորին է, շարժումն նիւր է, խոնա գոյացորին:

Մարմին է մածումն նիւրոյ:

Միտք յանձին եւ բնուրին՝ ի մարմնի:

Միտք անձին արարիշ եւ բնուրին՝ մարմնոյ:

Ո՞չ յամենայն անձին միտք, բայց յամենայն մարմնի՝ բնուրին:

Անման բնուրին՝ շարժումն մահկանացու բնուրեանս:

|| Երկիր՝ զերկուման անմահին՝ երկին՝ տեղի:

Անման եղեւ վասն անմահկանացուն, իսկ մահկանացուն լինի ի ձեռն անմահին:

Չար է պակասուրին բարտոյն, բարի է իւր լրուրին:

Անձն յաշխարհի եղանելի է միտք եւ նիւր բաժանաբար, անեղանելի՝ միտք, նիւր՝ բաժանելի:

Անձն եռամասն եւ նիւր՝ երեք մասումք յանձին եւ ի նիւր եւ ի բնուրին, միտքն աստուածոց ի բնուրեան անմահիցն:

Նախախնամուրին եւ յարկ եւ ի մահկանացուն եղելուրին եւ մահ եւ յաստուածոց անեղուրին:

Անմահին ընդ ինքեանս միաբանին եւ մահկանացուս ընդ ինքեանս նախանձին շարակնուրեամբ, բանզի նախանձ չար բարկանայ:

Յաղագս յառաջ զիտելոյ զմահն, անմահ առնէ, զոր միշտ առնեն, բայց մահկանացուն առնէ զոր ո՞չ երեք արար:

Մահ իմացեալ՝ անմահուրին է, ոչ իմացեալ՝ մահ:

Մահկանացուք ընդ անմահին անկեալ դնին, բայց անմահին մահկանացուց սպասաւոր լինին:

Ապա անձն ուրեմն է զոյացուրին անմահ, մշտնչենաւոր՝ իմացական իմացուած ունելով, զիւր բանն պարիմացական բնուրին չար իմանալով, զիւրենուր յարմարուրեան զիտէ եւ ի բաց վեարեալ ի բնական մարմնոյս, ինքեան բայ ինքեան տրում՝ բայ ինքեան ելով յիմահալի աշխարհի, իսկ սկզբասէր գոյուրին:

Արդ, չորեկին տարերքս առ չորս վարս զնդապէս կալով պարունակեալ լինի միշտ փորագոյնն առ ի մեծագունէն այսպէս. երկիր՝ ի չրոյ, զուր՝ յատոյ, աւղն՝ ի հրոյ:

Եւ ի միասին խառնումն չորից տարերացս այսպէս. երկիր՝ զուր և ցամաֆ, զուր՝ ցուրտ եւ խոնաւ, աւդ՝ խոնաւ եւ չերմ, հուր՝ չերմ եւ ցամաֆ:

Դարձեալ ունի եւ այլ երկու ոռակուրինս. երկիրս խիստ է եւ չոր, զուր՝ բուր է եւ գէջ, աւդ՝ խիստ է եւ շարժուն, հուր՝ սուր է եւ անգայս:

Դարձեալ եւ այլ ոռակուրինս ունին. երկիր ծանր է եւ անշարժ, զուր ծանր է եւ անշարժուն, աւդ թերեւ է եւ շարժուն. հուր սուր է եւ թերեւ:

Եւ խառնին ընդ միմեանս այսպէս. երկիր ցամաֆուրեամբն ընդ հրոյ, խկ ցրտուրեամբ ընդ չրոյ. զուր ցրտուրեամբ ընդ երկրի, խկ խոնաւուրեամբ ընդ ատոյ. աւդ խոնաւուրեամբ ընդ չրոյ եւ չերմուրեամբ ընդ հրոյ:

Դարձեալ բառ մակապարձուրեան խառնեալ են այսպէս, հուր չերմ է եւ ցամաֆ. չերմուրեամբ ընդ աւզոյ միանայ եւ ցամաֆուրեամբ՝ երկրի: Աւդ խիստ է եւ շարժուն. խոնաւուրեամբ ընդ չրոյ միանայ եւ շարժմամբ՝ ընդ հրոյ: Զուր ծանր է եւ շարժուն. շարժուրեամբ ընդ աւզոյ միանայ եւ ծանրուրեամբ՝ երկրի:

Այսպէս յարմարեալ են առ խոնանս, ծանրն ընդ թերեւին եւ խոնան ընդ չորին, սուրն ընդ թրին եւ անգայսն ընդ խոնին, զեղեցկապէս զմիմեանս կալեալ են ոռպէս եւ արժ երկու:

Ի խոնարի կալով եւ ի բարձրուրինս զձեռս տուեալ պեղեն զմիմեանս, հուր թերեւուրեամբ եւ սրուրեամբ բուռն հարեալ զմանուրեենէ երկրի եւ զանշարժուրեենէ, եւ աւդ չերմուրեամբ՝ զցրտուրին եւ զուր խոնաւուրեամբ կալ ալ զցամաֆուրին երկրի:

Եւ արդ՝ չորեկին տարերքս մարմին զոյլիի ներգործեալ ո՛չ է սոցա առանց ոռակացն:

Եւ սոցա ոռակու ո՛չ են ոռպէս այլ ոռակիս, այս է՝ զսեն կամ զավխտակն, այլ սոցայս ազդարարէ էին, զի սեն եւ սպիտակն ո՛չ ազդէ բովանդակ մարմնոյն, ոռպէս ցրտացուցանելն եւ չեռուցանելն եւ այլն:

Արդ, Պղատոն զերիս տարերքս ասաց ի միմեանս փոխարկել՝ զնուր, եւ զցուր եւ զատ, եւ զերկիր անփոխարելի մնալ, զի անշարժագոյն է բան զայլս:

Եւ Արխատոտէլ հինգերորդ տարր ասաց, ոռպէս թէ հուր եւ չուր, երկիր եւ աւդ, եւ արփի: Եւ զարփիս զայս՝ ատար ի չորիցս էութեանց, ոռպէս թէ աստուածոց բնակարան լինել զնա ասաց, զոր բազում հաւանեալ հինգերորդ աստուան էիցս, զոր արփի առէ շրջապատող:

